



ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԹԱՑԻԿ
ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ

Հ Ա Յ Ո Ց Լ Ե Չ Ո Ւ
Ե Վ
Հ Ա Յ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԹԵՍՏ № 1

Միտելի՛ աշակերտ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդա յուրաքանչյուր առաջադրանքը: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես այն բաց թողնել և դրան
անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող ես օգտագործել սևագրության համար:

Ցանկանում ենք հաջողություն

1 Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում **օ**.

- 1) վաղ-րոք, տն-րեն, օր-րոց, մեղմ-րոր
- 2) թիկն-թոց, ան-րեն, վառ-դ, գիշեր-թիկ
- 3) գիշերուզ-ը, բն-րրան, միջ-րե, ան-գուտ
- 4) աման-ըյա, դեղնագ-ծ, երկար-ըյա, մեղմ-րեն

2 Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում **ճ**.

- 1) փղ-կալ, տր-ակ, դեղ-ենի, դեր-ան
- 2) ատաղ-ագործ, ամբար-իչ, ան-կալի, ար-ան
- 3) որ-կալ, տարեդար-, վր-ին, գուղ-
- 4) ար-ակուրդ, պախուր-, հանդեր-անք, գլուխկոն-ի

3 Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում **ւ** գրվում.

- 1) ուղ-ճար, արժ-որել, կար-եր, ար-ելք
- 2) ինչ-է, հոգ-որ, հետ-ակ, ոսկ-որել
- 3) գին-աճառ, ուն-որ, հար-ան, գեր-արել
- 4) ազ-ազ, գոտ-որել, ալ-որ, դափն-արդ

4 Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում **շի** գրվում **յ**.

- 1) հա-ելի, Ռ-աֆա-ել, գա-խոն, ն-արդ
- 2) միմ-անց, օվկ-անոս, միլ-արդ, ժան-ակ
- 3) Իսրա-ել, Կարո-ի, մի-ություն, կրի-ա
- 4) բամ-ա, վերարկու-ի, ծի-ածան, երգե-ի

5 Ո՞ր բառում է ընդգծված **ռ**-ն արտասանվում **րօ**.

- 1) քեռռողի
- 2) արջառրս
- 3) բախտռոռչ
- 4) բարռակ

6 Ո՞ր շարքի բոլոր բառերն են գծիկով գրվում.

- 1) ալ(կարմիր), բուք(բորան), փոքրի(շատե), առոք(փառոք)
- 2) վերև(ներքև), հյուսիս(արևելք), դեսից(դենից), մանր(մունր)
- 3) գիշեր(ցերեկ), ոչ(ոք), ստեպ(ստեպ), տուն(թանգարան)
- 4) ժամ(պատարագ), գնացող(եկող), փոքր(ինչ), կողք(կողքի)

7 Ո՞ր շարքի անվանումների բոլոր բաղադրիչներն են մեծատառով գրվում.

- 1) ՆՅՈՒ ՅՈՐՔ, ԵՐՎԱՆԴ ՍԱԿԱՎԱԿՅԱՅ, ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՄԵԾ ՄԱՍԻՍ
- 2) ՆԱՐԵԿԱ ՎԱՆՔ, ՓՈՔՐ ԱՍԻԱ, ԵՋՆԻԿ ԿՈՂԲԱՅԻ, ԼՅՈՒԴՎԻԳ ՎԱՆ ԲԵԹՆՈՎԵՆ
- 3) ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ, ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ
- 4) ՄԵԾ ՀԱՅՔ, ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍ, «ՕՐԻՆԱՅ ԵՐԿԻՐ», ԱԼՊՅԱՆ ՍԱՐԳԱԳԵՏԻՆ

8 Ո՞ր բառում **ռ** ձայնավորի հնչյունափոխություն **չկա**.

- 1) սրբիչ
- 2) բրզածև
- 3) կառուցապատում
- 4) ձվածեղ

9 Ո՞ր բառում փակ վանկ *չկա*.

- 1) այլազգի
- 2) գրասեղան
- 3) հոգաբարձու
- 4) միջօրե

10 Ո՞ր շարքում են բառերը այբբենական կարգով դասավորված.

- 1) նկարչական, նվագախումբ, նվագակցել, նվագարան
- 2) հաշիվ, հաշվեհարդար, հաշվենկատ, հաշվեգիրք
- 3) մարդասեր, մարդ, մարդամոտ, մարդակեր
- 4) տուն, տանտեր, տնային, տնակյաց

11 Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա*:

- 1) Բարձր տների պատուհաններում Պայծառ լույսերը հանգչում են մեկ-մեկ:
- 2) Արդյոք բոցե վարդե՞րդ են վառ, Թե՞ վերքերն իմ հրահրուն:
- 3) Աշուն է. օրերը ցրտում են... Գիշերը սուզվում է միգում...
- 4) Մի զարմանալի թախծոտ կյանք էր կանաչում դեմը:

12 Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ.

- 1) անհողորդդ-երերուն, քնքուշ-վեհ, վեհանձն-ստոր
- 2) զարդարուն-անպաճույճ, օրինական-ապօրինի, ջրարբի-անջրդի
- 3) խոժոռվել-ժպտալ, բանուկ-սակավազնաց, առաթուր-անջրպետ
- 4) դալար-բարակ, լայնարձակ-անձուկ, տկար-վատառողջ

13 Ի՞նչ է նշանակում *գորդյան հանգույցը կտրել* դարձվածքը.

- 1) ճակատամարտում հաղթել
- 2) հետդարձի ճանապարհ չթողնել
- 3) կռվում միշտ հարձակվողի դերում լինել
- 4) լուծել դժվար, խճճված խնդիրը

14 Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ.

- 1) մածուկ, թանձրուկ, թնջուկ, խառնուրդ
- 2) քնքշանք, փաղաքշանք, գորով, սեթևեթանք
- 3) լալագին, աղիողորմ, ողբագին, կական
- 4) ընպանակ, գավաթ, կթղա, թաս

15 Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածանցավոր.

- 1) եռակի, ձեռնոց, վագր, մակբայ
- 2) անձկալի, ալեծուփ, կաթնասուն, բառացի
- 3) բարեհամբույր, յուրօրինակ, ինքնամոռաց, երկրորդ
- 4) բարձրուղեշ, ստորադաս, մենաստան, անկարգ

16 Ո՞ր շարքի բոլոր բառերն են պարզ.

- 1) թախիծ, վերարկու, արմատ, թիրախ
- 2) պատում, կախարդ, խնդիր, տրտում
- 3) դատարկ, փոթորիկ, կարոտ, շքեղ
- 4) ժառանգ, ճանապարհ, ծածուկ, մրոտ

17 Ո՞ր բառում մեկից ավելի արմատ *կա*.

- 1) գերմարդ
- 2) արտահագուստ
- 3) կարգադրել
- 4) փոխանուն

18 Ո՞ր շարքում գոյական *չկա*.

- 1) մրրիկ, արևաշող, ամենուրեք, փոթորկահույզ
- 2) ավեժաման, նկարագիր, մեծահամբավ, ժամանակավոր
- 3) վարելահող, երկարատև, շիկահեր, քինախնդիր
- 4) բարեսիրտ, արծաթափայլ, կամարակապ, մշտաժպիտ

19 Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոգնակին կազմում *-նեք* վերջավորությամբ.

- 1) ժամկետ, վայրէջք, նստացույց, վագր
- 2) ամսագիր, ֆիդայի, երկտող, խաղաթուղթ
- 3) պատճեն, արձակագիր, ռուս, հանքափոր
- 4) մեծատառ, օրինագիծ, հողամաս, նախագահ

20 Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման.

- 1) աշուն, շարժում, բախտախնդիր, խիզախություն
- 2) լուծում, ձիաբեռ, դաշտամուկ, հաստատում
- 3) գիշեր, ծանրություն, ընդմիջում, սարալանջ
- 4) նախադուռ, գալուստ, գումարում, անուն

21 Ո՞ր շարքում ածական *չկա*.

- 1) խոխոջյուն, սրճագույն, գարնանային
- 2) անշուշտ, հիմնովին, մաքրություն
- 3) բրոնզաձույլ, առաջին, մշտապես
- 4) դժգոհ, ներքուստ, հավերժ

22 Ո՞ր դերանունը ուղղական հոլով *չունի*.

- 1) ձեր
- 2) իր
- 3) իրար
- 4) սրանից

23 Ո՞ր շարքի բոլոր բայերն են բազմակատար (բազմապատկական).

- 1) խազմզել, պատռտել, թռչկոտել
- 2) ժանգոտել, կծոտել, կտրտել
- 3) ծակծկել, գծմծել, թեփոտվել
- 4) վազվզել, խշշալ, կոտրատել

24 Ո՞ր նախադասության մեջ հարակատար դերբայ *չկա*:

- 1) Մարդը լարված ականջ էր դնում, մինչև որ մեջքին պարզորոշ զգաց ինչ-որ մեկի շնչառությունը:
- 2) Նա գիտակցում էր, որ վաղ թե ուշ պետք է վեր կենա ու երես առ երես նայի իր հետևում կանգնածին:
- 3) Վայրկյաններն անցնում էին, և նա հասկանում էր, որ մոտենում է այն պահը, երբ ստիպված պիտի լինի կանգնել:
- 4) Երեկոյան կողմ նավը հատեց հասարակածը՝ ուղղություն վերցնելով դեպի Երկրագնդի հարավային բևեռը:

25 Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված սահմանական եղանակով.

- 1) գնացել էինք, կամեցավ, գրվելու է, շխոնարհվեցին
- 2) հասի՛ր, գալիս է, չերգեմ, փախավ
- 3) լսելու է, խոսում եմ, չի կարմրել, խնդրեմ
- 4) չեմ ներկի, չհուսահատվեցին, կգնայի, մոտեցրի

26 Ո՞ր շարքում են միայն անորոշ դերանուններ.

- 1) որևէ, ինչ-որ, մի քանի
- 2) ուր, միմյանց, այսպիսի
- 3) երբեք, յուրաքանչյուր, ոչ մեկը
- 4) բոլորը, նույն, ամեն ոք

27 Ընդգծված բառերից ո՞րը որոշիչ **չէ**:

- 1) Ես **հինգ հազար** մղոն հեռացել եմ տնից, միշտ հեռու եմ եղել և միշտ կլինեմ:
- 2) Ես կուզենայի ձեզ համար մի նոր երգ նվագել **այս** ոսկեփող շեփորով:
- 3) Բանաստեղծի հոգին լսում էր շարունակ լուսե նվագները հեռավոր **աստղերի**:
- 4) Քո հայրը մեր ժամանակի **չճանաչված** ամենամեծ բանաստեղծներից մեկն է:

28 Տրված է բաց թողած բառով նախադասություն:

Անտառում հանկարծ կերևար Պանինը, փայտահատի կկանգներ, կնայեր:

Ո՞ր տարբերակը պետք է տեղադրել բաց թողած տեղում.

- 1) կողքին
- 2) կողք
- 3) կողքում
- 4) կողքից

29 Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ **կա**:

- 1) Իմ մեջ կործանվեց իմ բոլոր ձգտումներն ու երազանքները:
- 2) Հայրենիքին նվիրված երգերի մեջ հառնում են նաև հայրենի երկրի պատմությունն ու մշակույթը:
- 3) Նա սպասեց այնքան, մինչև երեխաներից յուրաքանչյուրը մոտենա իրեն:
- 4) Երեք գագաթ էր գրավել Նժդեհը, և այդ երեք գագաթներով երեք բանակ ջախջախվեց:

30 Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ **չկա**:

- 1) Իմ մեջ տիեզերական գեղեցիկն է ապրում, և գեղեցկության արևներն են բոցավառվում իմ հոգուն:
- 2) Ես մի նսեմ հնչյուն միայն կարողացա պոկելու այդ մեծ լռությունից:
- 3) Ինքը ամբոխի հետ երկրպագում էր իր ստեղծագործությունը՝ հիացած ու զմայլված անրջական գեղեցիկի մարմնացումից:
- 4) Եթե նրանք չուզեցին լսել ինձ, արհամարհեցին մեծ ճշմարտությունը, ուրեմն ինչպե՞ս կարող եմ ազատվել տառապանքներից:

31 Տրված է բաց թողած բառով նախադասություն:

Գյուղի սառը խավարում վրնջաց անմայր մի քուռակ, բազմաթիվ մանր զանգակներ երգեցին անեզրական տխրություն:

Ո՞ր բառը պետք է տեղադրել բաց թողած տեղում՝ ճիշտ նախադասություն ստանալու համար.

- 1) թեև
- 2) ինչպես
- 3) կարծես
- 4) սակայն

32 Տրված է բարդ ստորադասական նախադասություն:

Կաքավները թփերի խշռոցը լսեցին թե չէ, իսկույն մի քանի պտույտ արին օդում, իջան արևախամն արտերի վրա:

Ո՞ր տարբերակում է այն ճիշտ փոխակերպված պարզ նախադասության:

- 1) Թփերի խշռոցը կաքավների լսելու ժամանակ նրանք իսկույն մի քանի պտույտ արին օդում, իջան արևախամն արտերի վրա:
- 2) Կաքավները թփերի խշռոցը լսելուց հետո իսկույն մի քանի պտույտ արին օդում, իջան արևախամն արտերի վրա:
- 3) Թփերի խշռոցը լսելուն պես կաքավներն իսկույն մի քանի պտույտ արին օդում, իջան արևախամն արտերի վրա:
- 4) Կաքավների թփերի խշռոցը լսելու պահին նրանք իսկույն մի քանի պտույտ արին օդում, իջան արևախամն արտերի վրա:

33 Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչից հետո ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Բանաստեղծի դստեր Նվարդ Թումանյանի գրի առած զրույցներից ենք իմանում որ Թումանյանը շարունակ անդրադարձել է այդ խնդիրներին:
- 2) Հայ դրամատուրգիայի մյուս մեծությունը Շիրվանզադեն էլ է կրել եվրոպական դրամատուրգիայի ազդեցությունը:
- 3) Իր սիրո երգերում զգացմունքները բնության պատկերներով է զուգորդել նաև սիրո մեծ երգիչը Իսահակյանը հետևելով ժողովրդական երգերի ավանդույթներին:
- 4) Լույս է տեսնում նրա առաջին լուրջ երկը «Ռուզան» պատմական դրաման և *Մուրացան* կեղծանունը շատ արագ հայտնի անուն է դառնում:

34 Ո՞ր նախադասության մեջ տրոհվող որոշիչ *կա* (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Նա վերջացրեց անսպասելի բոլորովին հանգիստ առանց ձայնը բարձրացնելու:
- 2) Եղեգնյա ավելը ձեռքին գալիս է արդեն խուլ մի պառավ:
- 3) Հողը չոր ու տեղ-տեղ ճաքճքած ագահորեն ներքաշում էր ջուրը:
- 4) Ամռան շոգին երբ արևն այնքան մոտ է ջերմությունը շատ առվի եզերքին միշտ էլ կարելի է տեսնել Լառ-Մարգարին:

35 Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ *չկա*:

- 1) Տղան դարձյալ կանգնեց ու նայեց լանջն ի վեր բարձրացող ճանապարհին, որ վերջանում էր հենց իր ոտքերի տակ, լեռների ուսագծին, ուր վերջին անգամ հնչեց հոր ձայնը:
- 2) Ծիրանի ծառի ստվերն ու արևի դեղին բծերը թրթռում են իմ տետրակի վրա, օրորվում՝ ինչպես ջրածառի ճոճքը:
- 3) Մի անգամ, փառատենչ իշխանը հանկարծակի խուժելով մի հեռավոր իշխանության սահմաններից ներս, ամրոցից ամրոց գրավելով, հաղթանակից հաղթանակ անցնելով՝ հասնում է երկրի մայրաքաղաքի փակ դռների առաջ:
- 4) Էստեղ թիակն առավ Ուրաշիման, մյուս թիակն առավ ծովի թագավորի աղջիկը, ու երկար թիավարում էին, մինչև հասան ծովի տակի վիշապների ապարանքը, ուր բնակվում էր ծովի աստվածը:

36 Տրված է բանաստեղծական հատված:

*Աշնան տխրահեծ անձրևի նման,
Անձրևի նման լալիս եմ անվերջ
Այն հնչյունները մեղմ ու միաձայն՝
Պատի հետևում և իմ հոգու մեջ...*

Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը դրանում գործածված **չէ**.

- 1) հանգ
- 2) անձնավորում
- 3) աստիճանավորում
- 4) մակդիր

37 Տրված են տառերով նշանակված նախադասություններ:

- ա.** Տուն գնալիս բրուտ Ավագը մի քանի քար է դարսում իրար վրա, վերևն էլ դնում ցաքի փուշ, որպեսզի, ինչպես ինքն է ասում, «քամին խաղա» և չորացնի ամանները:
- բ.** Առաջին մասում «չարխն» է, ջրի կուժը և կավե ցեխը. երկրորդ մասում բերանի վրա շարված են դեռ չթրծած կժեր, կուլաներ, գավաթներ և դարակներ:
- գ.** Բրուտի քարանձավը երկու մասից է. առաջինն ավելի ցածր է, երկրորդը՝ բեմի չափ բարձր:
- դ.** Քարանձավը դուռ չունի, այդ պատճառով էլ բրուտները ուրիշ կերպ են մուտքը փակում:

Տառերի ո՞ր դասավորությունն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական ճիշտ հաջորդականությանը.

- 1) դ, գ, ա, բ
- 2) դ, ա, գ, բ
- 3) գ, բ, դ, ա
- 4) գ, դ, բ, ա

38 Ո՞ր նախադասությունն է շարադրված միջին հայերենով:

- 1) -Արա՛քս, ինչո՞ւ ձրկանց հետ Պար չես բռնում մանկական, Դու դեռ ծովը չի հասած՝ Սըգավոր ես ինձ նըման:
- 2) Մեծցայ, սիրու տեր եղայ, երեսիս գոյնըն կու գընայ. Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ, որ սիրուն քարըն չի դիմնայ...
- 3) Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթեր, Լեզուին շարժողին Քաղցրերգանայր տալիդն...
- 4) Ո՛հ, իմ սիրտը կտրատվում է՝ Տեսանելով այսպես սեր Դեպի թշվառ մի հայրենիք, Որ ոտնակոխ եղած էր:

39 Ո՞վ է հայ ամենամեծ շարականագիրը.

- 1) Գրիգոր Նարեկացին
- 2) Ներսես Շնորհալին
- 3) Ֆրիկը
- 4) Նահապետ Քուչակը

40 Ինչպե՞ս են անվանված «Մասնա ծռեր» էպոսի ճյուղերը.

- 1) գլխավոր հերոսների անուններով
- 2) գլխավոր իրադարձությունների անուններով
- 3) խորհրդանիշների անուններով
- 4) վերջին իրադարձությունների անունով

41 Ո՞ր պարբերականին է աշխատակցել Միքայել Նալբանդյանը.

- 1) «Ազդարար»
- 2) «Մշակ»
- 3) «Մեղու»
- 4) «Հյուսիսափայլ»

42 Նշված մտքերից ո՞րը Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից չէ:

- 1) Ո՛չ ասորիք, ո՛չ պարսիկք չէին կարող էն գորությունն ստանալ, եթե հայոց ազգը մեկի դինը չէր պահել:
- 2) Բանաստեղծը չի կարող և չպետք է լինի պատմության ստրուկը, այդ դեպքում նա կդառնա արտագրող և ոչ թե ստեղծագործող:
- 3) Մեկ ազգի պահողը, իրար միացնողը լեզուն ա ու հավատը:
- 4) Թե ազգասիրությունն ու հայրենասիրությունը ձեզ վնաս տա, անիծեցե՛ք ինձ, թե օգուտ՝ օրհնեցե՛ք:

43 Ո՞ր շարքում են միայն Վահան Տերյանի բանաստեղծությունների ժողովածուները.

- 1) «Նոր տաղեր», «Մթնշաղի անուրջներ», «Կատվի դրախտ»
- 2) «Երկիր Նաիրի», «Ոսկի հեքիաթ», «Գիշեր և հուշեր»
- 3) «Մարդը ավի մեջ», «Ծիածան», «Տաղարան»
- 4) «Հեթանոս երգեր», «Եղիցի լույս», «Նորից քեզ հետ»

44 Ամբողջական միտք արտահայտող երկտող տներից բաղկացած, հանգավորման կայուն համակարգ ունեցող բանաստեղծությունը, որում տների երկրորդ տողերը հանգավորվում են առաջին երկտողի հետ, կոչվում է՝

- 1) սոնետ
- 2) հայրեն
- 3) տրիոլետ
- 4) գազել

45 Ո՞ր ստեղծագործությունից են հետևյալ տողերը.

*Եվ ողբացին լալահառաչ դժխեն՝ բախտը Հայաստանի
Եվ հուսացին արդարության մի խուլ աստծո դատաստանի:*

- 1) «Հոգեհանգիստ» (Հովհաննես Թումանյան)
- 2) «Մատյան ողբերգության» (Գրիգոր Նարեկացի)
- 3) «Մեր պատմիչները և մեր գուսանները» (Ավետիք Իսահակյան)
- 4) «Դանթեական առասպել» (Եղիշե Չարենց)

46 Նշված ստեղծագործություններից ո՞րը դրամատուրգիական ժանրի չէ.

- 1) «Պատվի համար» (Շիրվանգաղե)
- 2) «Պաղտասար աղբար» (Հակոբ Պարոնյան)
- 3) «Արա Գեղեցիկ» (Նաիրի Զարյան)
- 4) «Քաջ Նազար» (Հովհաննես Թումանյան)

47 Ո՞վ է Գրիգոր Զոհրապի «Այինկա» նորավեպի (նովելի) հերոսուհին.

- 1) Տիգրանուհին
- 2) Զարդարը
- 3) Պերճուհին
- 4) Վասիլիկը

48 Ակսել Բակունցի ո՞ր պատմվածքն է արժարժում արևմտահայության ողբերգությունը.

- 1) «Միրհավ»
- 2) «Խոնարհ աղջիկը»
- 3) «Ալպիական մանուշակ»
- 4) «Ծիրանի փողը»

49 Որտե՞ղ է ծնվել Հրանտ Մաթևոսյանը.

- 1) Գսեղում
- 2) Ահնիճորում
- 3) Ծնակուտում
- 4) Անտառամեջում

50 Գրական ո՞ր ուղղության իդեալն է անտիկ արվեստը.

- 1) ռոմանտիզմ
- 2) ռեալիզմ
- 3) կլասիցիզմ
- 4) սիմվոլիզմ

51 Ո՞ր տառակապակցությունը թվային արտահայտություն *չունի*.

- 1) ԱՀՆՏ
- 2) ԲԻԳ
- 3) ԴԹ
- 4) ՓՊԲ

52 Ո՞ր բառում ածանցի հնչյունափոխություն *կա*.

- 1) դասամիջոց
- 2) օրինագիծ
- 3) բազմություն
- 4) գործունեություն

53 Տրված են նախադասություններ, որոնց մեջ բառերից 10-ում տառեր են բաց թողած:

Կյանքի հոգսերի տակ **կ-ած (1)** ծերունին փայտե դրվագազարդ գդալներ էր պատրաստում՝ դրանց վաճառքով հոգալով ընտանիքի ապրուստը:

Խաղողի փարթամ **որ-երով (2)** զարդարված այգին հաճախ էր **ու-տի (3)** գնացողներին պատսպարում **բար- (4)** արևի շողերից:

Ձիու համաչափ **վար-ը (5)** օրորում էր հեծյալին, և նա նիրհում էր՝ **ան-ագած (6)**, վերացած աշխարհից:

Մի փոքրիկ բարձունքի վրա կանգնած է քարայծի խրտվիլակը՝ մեջը **հար- (7)** լցրած:

Երկրի **կենտրոնախույ- (8)** ուժերը **գր-ամուլ (9)** կյանք էին վարում **գինարքու-ներում (10):**

Համապատասխան բառերում բաց թողած տառերը պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված.

- 1) 1-ք, 2-դ, 3-դ, 4-գ, 5-ք, 6-է, 7-ճ, 8-գ, 9-գ, 10-կ
- 2) 1-ք, 2-թ, 3-խ, 4-կ, 5-գ, 6-է, 7-դ, 8-ս, 9-գ, 10-ք
- 3) 1-ռ, 2-ս, 3-դ, 4-ք, 5-կ, 6-ե, 7-ս, 8-գ, 9-կ, 10-ք
- 4) 1-ռ, 2-ճ, 3-խ, 4-դ, 5-ս, 6-ե, 7-թ, 8-ս, 9-կ, 10-կ

54 Տրված է բանաստեղծական հատված:

*Գետ էր, գետափ էր, անտառ էր, **հով** էր,
Սունկի **բուրմունքից** կեչին **գինով** էր,
Կեչին **չոքել** էր արահետին
Եվ կարծես մի քիչ գույնը գցել էր...
Անձրեն իր **խոսքը** ասել-սրծել էր,
Չայնը տվել էր սղտոր գետին:*

Ընդգծված բառերից քանի՞սն են գործածված փոխաբերական իմաստով.

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) բոլորը

55 Ո՞ր շարքում բառի սխալ բացատրության **չկա**.

- 1) խունանալ-գույնը կորցնել, հովել-ամառանոց եկած անձ
- 2) ջրբաժան-ջրաչափ սարք, հերկել-հողը վարել
- 3) աշակերտել-մեկին սովորեցնել, գիսակ-մազերի փունջ
- 4) սնապարծ-անխելք մարդ, տրցակ-թղթերի կապոց

56 Նշվածներից ո՞րը **գամել** բառի փոխաբերական իմաստներից **չէ**.

- 1) հայացքը սևեռել
- 2) հիշողության մեջ ամրակայել
- 3) անարգանքի ենթարկել
- 4) ուշադրությունը կենտրոնացնել

57 Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշներ.

- 1) սեղմել-մամլել, տարտամ-անորոշ, գտարյուն-կորովի
- 2) միալար-անընդհատ, ընկղմել-խորասուզել, արտառոց-անփորձ
- 3) բաղձանք-իղձ, անսայթաք-անգայթ, աղճատել-աղավաղել
- 4) ծանուցել-իրազեկել, մտացածին-սնամեջ, ապավեն-պաշտպան

58 Ո՞ր բառի արմատներից մեկին կմիանա **-ական** ածանցը և բառ կկազմի.

- 1) քարայր
- 2) քաղցրանուն
- 3) վարչակարգ
- 4) վերջնարկ

59 Ո՞ր դեպքում է **գլուխ կոտրել** դարձվածքի իմաստը ճիշտ բացատրված.

- 1) մեկին փորձանքի բերել
- 2) խնդիրը լուծել
- 3) մեկին տանջել
- 4) մի բանի վրա շարչարվել

60 Ո՞ր նախադասության մեջ դերբայի կամ ձևաբայի սխալ ձև *չկա*:

- 1) Դատարանը տուժվածից ցուցմունք վերցրեց կատարվածի վերաբերյալ:
- 2) Օրապահը թռնում է տեղից ու գնում զանգը տալու:
- 3) Փոքրիկը, ծաղրածուին տեսնելով, սկսեց բարձր ծիծաղալ:
- 4) Ջրի ցայտերը դիպան ապակուն ու անմիջապես սառեցին:

61 Ո՞ր նախադասության մեջ դերանուն *չկա*:

- 1) Ձյունը դեռ չէր հալվել, բայց արևի ջերմությունից արդեն զգացվում էր, որ գարունը բոլորովին էլ հեռու չէ:
- 2) Մի քանի տեղ աղվեսը ուժասպառ ընկել էր, արյունն ավելի շատ էր հոսել, և ձյունի վրա թափվել էին մորթու մազերը:
- 3) Կրակոցից ծառի ճղներից ձյուն թափվեց, բայց վառողը չխանձեց ոչ մի աղվեսի մորթի:
- 4) Անտոնը կրակեց, մուխի մեջ տեսա, թե ինչպես աղվեսը գլորվեց:

62 Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ *չկա*:

- 1) Ինձ թվաց, թե սպիտակ տան ներսը մեկը գոռգոռում էր և ոտքը խփում գետնին:
- 2) Գիտեի՞նք միայն, որ քեռիս զինվոր եղած ժամանակ ընդդիմացել է:
- 3) Մենք հասկանում էինք, թե կա մի մարդ, որ եթե մտքին դնի, ստույգ լուր կբերի մեր Եզոր քեռուց:
- 4) Կուշտ կերած մեր ձիերը արագ քայլերով բարձրանում էին քարոտ արահետը և ամեն քայլավորիսի փնջում:

63 Ո՞ր նախադասության ստորոգյալն է արտահայտված ըղձական եղանակով:

- 1) Լինե՞ր մի կանաչ հովիտ, մեջը՝ մի խոր աղբյուր:
- 2) Նա ուզեց գնալ՝ տեսնելու՝ հեռվում օրորվողը ձի՞ է, թե՞ քարակույտ:
- 3) Մոռանա՞լ, մոռանա՞լ ամեն ինչ, ամենին մոռանալ...
- 4) Երբ ջուրն արդեն եռացած պիտի լիներ, պարզվեց, որ ինքը ջուր չի խնդրել:

64 Ո՞ր նախադասության մեջ վերաբերական *չկա*:

- 1) Գուցե Բասուտա գետը, ուրիշ գետի հետ խառնվելով, հասնում է այն ծովին:
- 2) Նա ուզում էր սխալ լսած լինել, բայց ես հենց հաստատեցի ասածս:
- 3) Բանաստեղծն արդեն տանջանքից հոգնել, Ուզում է քնել, հավիտյան քնել:
- 4) Պատասխան տո՛ր ինձ, մատնի՛չ սևաչյա, Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն...

65 Տրված է նախադասություն՝ բաց թողած բառերով:

Երկրի համաձայն՝ թո՛ղ, և արքայադուստրը սիրտը կտա

(1. հաղթանակել, 2. ինքը, 3. մենամարտել, 4. սովորություն)

Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (տեղադրվելիք բառերը տրված են ուղիղ ձևերով).

- 1) 4, 3, 2, 1
- 2) 3, 1, 4, 2
- 3) 4, 1, 2, 3
- 4) 1, 4, 2, 3

66 Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ *չկա*:

- 1) Արշակը անվնաս մարդ էր, իր ճամփան իրեն համար գնում էր:
- 2) Քո սպառնալի սովերից զարհուրած՝ չէին համարձակվում ինձերն ու վագրերը մոտենալ մեր որսատեղի սահմաններն անգամ:
- 3) Սիրող սիրտը լսում է միշտ այն բոլոր խոսքերին, որ մրմնջում են իրերը:
- 4) Լույսն ու խավարը իր հոգում՝ փառաբանում էր նա հայրենի կանաչ դաշտերն ու դեղին գետերը, ճերմակ լոտոսներն ու ծիրանի գինին:

67 Ո՞րը բարդ ստորադասական նախադասություն *չէ*:

- 1) Շատ բան, որ ծածկված էր առեղծվածի մշուշով, հասկանալի դարձավ:
- 2) Կաքավաբերդի գլխից ամպը հսկա խխունջի պես սողաց դեպի վրանները, խոնավություն կաթեց քարերի վրա:
- 3) Ինչ որ ես չեմ ասել, նա կասի վաղը:
- 4) Մենք էլ նստում էինք այնքան, մինչև քունը հաղթեր, գլուխներս հենեինք քուրսու թախտին:

68 Ո՞ր տարբերակում ձևի պարագա ստորադաս նախադասություն *կա*:

- 1) Նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանիշակը:
- 2) Տղան պատմեց, թե ինչպես արծաթ սովող մարդը մոր պատկերը հանեց թերթի վրա և դրեց ծոցը:
- 3) Քամին խշշացրեց թփերը, ինչպես Սոնան՝ սիմֆոնիի երկար ցողունները:
- 4) Այդպես մի անգամ էլ՝ շատ տարիներ առաջ, ճոնչաց այգու դուռը. լի, արև օր էր:

69 Տրված է անավարտ նախադասություն:

Մոտիկ էլեկտրակայանից մոռացել էին միացնել ծնակուտի լույսերը, իսկ մեծ լուսինը միայն փայլում էր և չէր ողողում նրա տները, այգիները, արահետները, որովհետև...

Ո՞ր տարբերակն է նախադասության տրամաբանական ճիշտ շարունակությունը.

- 1) թանձր անտառը չէր անդրադարձնում ոչ մի շող:
- 2) հնձից եկել էին ու քնել, և հարկավոր չէր ո՛չ լույս, ո՛չ թերթ, ո՛չ գրույց:
- 3) Քոլագերանը վաղուց վառել էր իր լույսերը և տաք պատուհաններով նայում էր կայարանի խաղաղությանը:
- 4) մթում վարարել էր հեղեղատը:

70 Տրված է պարզ նախադասություն:

Հայրենիքը կորցրած և օտար ափերում թափառական դարձած հայ մարդկանց գլխին կախված է մայրենի լեզուն կորցնելու վտանգը:

Ո՞ր տարբերակում է այն ճիշտ փոխակերպված բարդ ստորադասական նախադասության:

- 1) Ովքեր կորցրել են հայրենիքը և թափառական են դարձել օտար ափերում, այդ հայ մարդկանց գլխին կախված է մայրենի լեզուն կորցնելու վտանգը:
- 2) Հայ մարդկանց գլխին, եթե կորցրել են հայրենիքը և թափառական են դարձել օտար ափերում, կախված է մայրենի լեզուն կորցնելու վտանգը:
- 3) Մայրենի լեզուն կորցնելու վտանգը կախվում է այն հայ մարդկանց գլխին, ովքեր կորցնում են հայրենիքը և թափառական են դառնում օտար ափերում:
- 4) Այն հայ մարդկանց գլխին, ովքեր կորցրել են հայրենիքը և օտար ափերում թափառական դարձել, կախված է մայրենի լեզուն կորցնելու վտանգը:

71 Տրված է ուղղակի խոսքով նախադասություն:

-Ի՞նչ ուժով պիտի հաղթես արաբներին, Մարգպետունի՛ իշխան. մենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունենք,-հարցրեց թագուհին երկյուղած:

Ուղղակի խոսքը անուղղակիի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

- 1) Թագուհին երկյուղած հարցրեց, թե Մարգպետունի իշխանը ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 2) Թագուհին երկյուղած հարցրեց Մարգպետունի իշխանին, թե նա ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. իրենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 3) Թագուհին երկյուղած հարցրեց Մարգպետունի իշխանին, թե ինքը ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. իրենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 4) Թագուհին երկյուղած հարցրեց Մարգպետունի իշխանին, թե իրենք ինչ ուժով պիտի հաղթեն արաբներին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:

72 Տրված է համը բնագիր:

Մեր պարտեզի բարձր բարդու վրա ուր ծառը երեք մեծ ճյուղերի էր բաժանվում (1) երկու արագիլ (2) այր ու կին (3) իրենց բույնն էին հյուսել (4) մի ամուր և մեծ բույն այնպես որ արագիլները իրենց ձագուկներով հանգիստ տեղավորվում էին այնտեղ: Ամեն գարուն (5) հենց որ ձնծաղիկներ էին երևում (6) գալիս էին արագիլները: Հսկա թևերը գյուղի վրա ծափ տալով (7) և ուրախ լալ-լալ անելով գալիս էին հանգչում իրենց վաղեմի բնի վրա: Անցնում էր մի ժամանակ (8) ու մի օր էլ մենք տեսնում էինք երեք-չորս փոքրիկ ձագեր (9) բնի միջից գլուխները հանած (10) լալ-լալ անելիս:

Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում նախադասության մեջ ստորակետ պիտի լինի.

- 1) 1, 2, 3, 5, 9
- 2) 3, 4, 6, 7, 9, 10
- 3) 2, 4, 5, 7, 8, 10
- 4) 1, 3, 4, 5, 6, 8

73 Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:

- 1) Միքայելը՝ միջմեկ տղան, ասես անուղղելի է. շռայլում է՝ ոչինչ չվաստակելով, մաշելով օրերը թղթախաղերի սեղանների մոտ, իսկ առողջությունը՝ անվայել զվարճությունների մեջ:
- 2) Քանի չէինք հասել լեռնանցքին, ճամփան հարթ էր, ողորկ և ուղղահիգ, բայց երբ մոտեցանք բարձունքին, դարձավ ոլորապտույտ ու զառիթափ:
- 3) Ամրոցի բարձրաբերձ պարիսպները ոչ միայն հուսալի պատնեշ էին բնության տարերքի արհավիրքների դեմ, այլև ծառայում էին որպես պաշտպանական միջոց թշնամիների հարձակման ժամանակ:
- 4) Հրաշեկ արևը երկնքից անընդհատ կրակ մաղելով՝ առավոտվանից կիզում էր, ինչպես միջօրեին:

74 Տրված է շարադրանք:

Ամեն տեղ և ամեն ինչ կարելի է խնայել, բայց երբ բանը գալիս է երեխաներին, չպետք է խնայել ո՛չ միջոցներ, ո՛չ ջանք, ո՛չ ստեղծագործական եռանդ: Այդպես է, քանի որ խոսքը վերաբերում է այն հասակին, երբ ձևավորվում է երկրի ապագա քաղաքացին: Կորցնել այդ հասակը, որ տրված է մարդու բնավորության դաստիարակության համար, նշանակում է շատ բան կորցնել: Եվ՝ անվերադարձ: Մեռյալ ազգը, մեռյալ հասարակությունն է միայն, որ ոչինչ չունի տալու իր նորահաս սերնդին:

Գործառական ո՞ր ոճով է այն շարադրված.

- 1) հրապարակախոսական
- 2) վարչական
- 3) գիտական
- 4) գեղարվեստական

75 Ո՞ր նախադասության մեջ աստիճանավորում կա:

- 1) Նա մարդկանց արհեստներ սովորեցրեց, տվեց գիտելիքներ, սովորեցրեց հաշվել, գրել ու կարդալ:
- 2) Տարիներ, դարեր են տևում Պրոմեթևսի տառապանքները:
- 3) Կրկին կաճի նրա լյարդը, սակայն գնալով ավելի ու ավելի կլիներ նրա տառապանքները:
- 4) Ահեղադողորդ փուլ եկավ ժայռը և Պրոմեթևսի հետ գահավիժեց անդունդը՝ հավերժական խավարի մեջ:

76 Տրված են տառերով նշանակված պարբերություններ:

- ա. Թվում է՝ դա ճանապարհորդելու շատ էժան և հեշտ եղանակ է: Պետք է միայն բարձրանալ Երկրից վեր և օդում մնալ գոնե մի քանի րոպե, և մարդ կիջնի բոլորովին այլ վայրում՝ դեպի արևմուտք:
- բ. Միրանո դե Բերժերակն իր մի երգիծական երկում պատմում է, թե իբր ֆիզիկայի փորձեր անելիս նա մի անգամ անհասկանալի ձևով օդ է բարձրացել: Իսկ երբ մի քանի ժամից հետո նրան վերջապես հաջողվել է նորից իջնել Երկրի վրա, ապա, ի զարմանս իրեն, հայտնվել է ոչ թե հարազատ Ֆրանսիայում և նույնիսկ ոչ թե Եվրոպայում, այլ Հյուսիսային Ամերիկա մայրցամաքում՝ Կանադայում:
- գ. Ֆրանսիացի գրողը իր անսպասելի թռիչքը Ատլանտյան օվկիանոսի վրայով միանգամայն բնական է համարում: Նա դա բացատրում է նրանով, որ երբ ականա ճանապարհորդը կտրված է եղել Երկրի մակերևույթից, մեր մոլորակը շարունակել է առաջվա պես պտտվել դեպի արևելք:
- դ. Փոխանակ հոգնեցուցիչ ճանապարհորդություններ ձեռնարկելու մայրցամաքների և օվկիանոսների վրայով՝ կարելի է անշարժ մնալ երկրագնդից վերև և սպասել, մինչև երկրագունդն ինքը ճանապարհորդին հրամցնի նրա ժամանան վայրը: Բայց ափսոս, որ ճանապարհորդելու այս զարմանալի եղանակը միայն ֆանտազիա է: Օդ բարձրանալով՝ մենք, ըստ էության, դեռ չենք պոկվում Երկրից, կապված ենք մնում նրա գազային թաղանթի հետ, որը նույնպես մասնակցում է Երկրի պտույտին նրա առանցքի շուրջը:

Տառերի ո՞ր դասավորությունն է համապատասխանում պարբերությունների տրամաբանական ճիշտ հաջորդականությանը.

- 1) գ, ա, դ, բ
- 2) բ, գ, ա, դ
- 3) դ, ա, բ, գ
- 4) բ, ա, գ, դ

77 Տրված է շարադրանք:

Կյանքը Երկրի վրա սկիզբ է առել աստիճանաբար, Երկրի գոյացումից շատ ու շատ տարիներ անց: Երկրի կեղևը սառել ու պնդացել է միլիարդավոր տարիների ընթացքում: Ջրային գոլորշիները խտացել և տաք անձրևի տեսքով թափվել են Երկրի վրա, ապա աստիճանաբար սառել է նաև ջուրը: Այդ ժամանակ արդեն ջրում կային բազմազան քիմիական նյութեր, որոնցից առաջացան ավելի բարդ քիմիական միացություններ, որոնցից էլ կազմվեցին սպիտակուցի մոլեկուլներ: Դրանք աստիճանաբար սկսեցին սնվել՝ կլանելով ջրում լուծված նյութերը, դրանցով կառուցել իրենց սպիտակուցավոր մարմինը, իսկ թափոնները նետել դուրս: Նրանք հնարավորություն ստացան կիսվելու միջոցով աճելու և բազմանալու: Այդպես համաշխարհային օվկիանոսի օրորոցում անհիշելի ժամանակներում ծնվեց կյանքը: Բնության հարավոփոխ արվեստանոցում սպիտակուցի փոքրիկ, կենդանի գնդիկից միլիարդավոր տարիների ընթացքում առաջացան այսօր աներևակայելիորեն բազմազան կենդանի էակները:

Ո՞ր միտքը *չի* հակասում շարադրանքի բովանդակությանը:

- 1) Միլիարդավոր տարիներ առաջ ջրում առկա քիմիական նյութերը ավելի բարդ բաղադրություն ունեին, քան առաջին սպիտակուցային գնդիկները:
- 2) Համաշխարհային օվկիանոսում առաջացած փոքրիկ, կենդանի գնդիկները, միլիարդավոր տարիների ընթացքում փոփոխվելով, առաջացրել են ներկայիս կենդանի աշխարհի բազմազան ձևերը:
- 3) Առաջին սպիտակուցավոր մարմինները կիսվում ու բազմանում էին սնվելու և թափոնները դուրս նետելու միջոցով:
- 4) Առաջին սպիտակուցային գնդիկներից կիսման և բազմացման միջոցով կազմվեցին սպիտակուցային մոլեկուլներ:

78 Ո՞ւմ մասին է Ավետիք Իսահակյանը ասել.

«Նա թարմացրեց հայ պոեզիայի և՛ նյութը, և՛ լեզուն».

- 1) Վահան Տերյանի
- 2) Միքայել Նալբանդյանի
- 3) Հովհաննես Թումանյանի
- 4) Եղիշե Չարենցի

79 «Հեթանոս երգեր» շարքում և «Հարճը» պոեմում ինչո՞ւ էր Դանիել Վարուժանը դիմում հեթանոս անցյալին.

- 1) հեթանոսությունը և քրիստոնեությունը հակադրելու համար
- 2) հեթանոս մեռած աստվածներին վերակենդանացնելու համար
- 3) մեր հեթանոս նախնիների ուժի և գեղեցկության պաշտամունքի միջոցով իր դարաշրջանի ոգու խեղճությանն ու մյուս արատավոր երևույթներին հակադրվելու համար
- 4) հեթանոս արքաների և իշխանների հաղթանակները փառաբանելու համար

80 Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմում ի՞նչը պատկերված **չէ**.

- 1) Կոմիտասի կենսագրությունը 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ողբերգական իրադարձությունների համապատկերում
- 2) հայ ժողովրդի տառապանքը թուրքական բռնատիրության լծի տակ
- 3) Կոմիտասի ընտանեկան ողբերգությունը
- 4) հայ ազգային և հոգևոր երգի վերածնման մեջ Կոմիտասի դերի գեղարվեստական արժևորումը